մի ոսկեզօծ թուր, յուսալով որ նրա փայլի վրայ կը դան թշնամիները եւ կը սպանեն իրեն: Փորձանքն անցաւ: Ամբոխը՝ անուշադիր տիկնոջ, սկսեց կողոպուտի եռեւէ լինել եւ հետապնդել փախչողներին: Մինչ այս մինչ այն, վրայ հասան Սահակի մարդիկ, ապա ինքն իր բանակով, եւ հալածեցին թշնամիներին:

Նոյն պատմագիրը հաւատացնում է, որ Մահդիից յետոյ Յուսամեան աղանդաւորների պետը եղաւ մի ոմն Հարուն եւ նրա սպանութիւնից յետոյ Բաբեկ (Chabot, Michel le Sprien, III, P. 50):

Վերեւ տեսանք, որ Բաբակի մասին առաջին անգամ լսում է Հատիմ Իբն Հարթումի ապստամբութեան ժամանակ 816–817 թուին:

Մովսէս Կաղանկատուացու վկայութեամբ Հայաստանի բահմաններում, Սիւնիքում, երեւում է Բաբան (այսինքն՝ Բաբակ) 270 հ. = 821 թուի: Եթէ արդարեւ այն անձը, որ սպանուեց Սահակի ձեռքով, Բաբակի նախորդներից է, ապա սպանութիւնը տեղի է ունեցել 821, գուցէ եւ 817 թուից յառաջ:

Ո՞վ է Մահդին եւ իրօք նրա բնակավայրը Կորդուաց լեռներումն է՞ր թէ Ատրպատական, ինչպէս հաւատացնում են արաբ մատենագիրները, դժուար է ասել:

Մեր նպատակի համար բաւ է այսքանը, որ Սահակի միջնադէպը դասելու է հաւանօրէն 820 թ. ոչ ուշ: Կորդուաց աշխարհի մօտերքը իշխում էր այդ ժամանակ Սահակը, Աշոտ Մամակերի որդիներից մէկը: Մարկուարդ կանգ է առնում Տարօնի վրայ, իսկ ինձ աւելի ընդունելի է թւում Մոկաց դաւառը, որ իրապէս սահմանակից է Կորդուքին եւ Բագրատունեաց ձեռքին էր:

Այս Սահակի որդին պէտք է լինի Սմբատ Մոկաց իշխեցողը, որ Բուղայի ձեռքից ազատեց Վասպուրականի զերիներին (Թովմ. Արծր. III 2): Սա Բուղայի բարեկամն էր. «Ցոյժ սիրեցեալ եղեւ ի զօրավարէն», ուստի եւ շատերը շփոթում են Մամակերի որդու եւ յաջորդի Սմբատ-Աբլաբասի հետ, մինչդեռ սրա մասին առաջին անգամ խօսում է պատմագիրը, երբ սկսում է պատմել Բուղայի դալստեան երկրորդ տարուան անցքերը (Թովմ. Արծ. III 9):

Սմբատ Մոկաց իշխեցողի որդին է թերեւս Մուշեղ Մոկաց իշխեցող («Աշոտ Կուրապաղատ հայոց իշխան, Մուշեղ իշխան Մոկաց, Շապուհ եղբայր իշխանաց իշխանի», Թովմ. III 19, «Սմբատ եւ զՇապուհ եւ զՄուշեղ Մոկաց իշխեցողս», իշխեցող եւ ոչ իշխեցողք, որպէս տպուած է), Թովմ. III 17): Մուշեղն սպանուեց ծեր հասակում Անձեւացեաց Գուրգէն իշխանի ձեռքից (Յովհ. կթ. էջ 98, «Ալեւոր հերօք»):

Մամակերի ժամանակ երեւան են գալիս Սիւնեաց եւ Աղուանից իշխանական տները: Առաջնի հիմնադիրն է Վասակ: Սա կռուի է բռնւում Սեւադայ Ջահապի արաբ իշխանի հետ եւ նրան քշում է Բաբակի օգնութեամբ, բայց ինքը մահանում է նոյն 821 թուին:

Ճիշդ նոյն 821 տարին յիշւում է առաջին անգամ Սահլ Սմբատեան իշխանը: Պարտուելից արաբական մի զինուած դունդ ասպատակում է Ամարասը և զերիներ առնելով ամրանում Մեծերանց դաւառում: Սահլ յարձակւում է յափշտակիչների վրայ եւ ազատում զերեալներին: Սահլ էր այն անձը, որ հայոց 286 = 837 թ. մատնեց հռչակաւոր Բաբակ ապստամբին: Բուղայի արշաւի ժամանակ 852 թ. նա դեռ կենդանի էր եւ զերուած իշխանների թւում: Արաբական Սահլ կչռում է հայ Սահակը: Սահլ-Սահակ եւ Սմբատ երկուսն էլ առաւելապէս Բագրատունի անուններ են, եւ հաւանական է, որ Սահլ Սմբատեանը Բագրատունի ծագում ունի:

Սակայն, Սմբատը չի կարող ոչ Մամակերի որդին՝ Սմբատ Աբլ-Աբասը եւ ոչ նրա հայր՝ Սմբատ Սպարապետը լինել, այսինքն՝ Սահլ ոչ Մամակերի եղբայրն է եւ ոչ թոռը: Սմբատ խոստովանողը «ի մանկութեան պատանդ էր» Սամարա խալիֆի դրան եւ ազատ արձակուեց միայն 275 հ. = 826 թուին: Սրանից յետոյ է որ նա ամուսնացաւ Դաւիթի քրոջ հետ: Եթէ անգամ այս երկրորդ ամուսնութիւնն լինէր, ամէն դէպքում 821 թուին նա չէր կարող հասուն որդի ունենալ, երբ նրա աւագ եղբայր Սահակ Մոկաց իշխանը հաղիւ դիեցիկ զաւակ ունէր Մահդիի սպանութեան տեսն մերձ 820 թ.:

Սահլ որդի չէ եւ Սմբատ Սպարապետի,